

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:  
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք գիտում են ուղղակի  
Тифлис. Редакция «Мерка»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տոն օրերից):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են  
իրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՏ

Վերջին անգամ խնդրում ենք մեր բա-  
ժանորդներին, որոնք գեղ. չեն վճարել Մը-  
րակի բաժանորդագինը, շուտով հասցնել մեր  
խմբագրութեանը նրանց վրա մնացած բա-  
ժանորդագրական պարտքը:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ներքին լուրեր:—ԱՐ-  
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: «Русский Курьер» լրա-  
գրի թղթակցութիւն: Արտաքին լուրեր:—ԽՈՒՆ  
ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:—ՑԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-  
ՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Տանձոտ գիւղ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 17-ին, երեկոյեան, տեղի ունեցաւ  
կովկասեան Գեղարտեստեական ընկերութեան մէջ  
ընդհանուր ժողով, որին ներկայ էին՝ պետական  
կառավարներ մինիստր պ. Օստրովսկի, երկրի  
կառավարչապետ իշխան Գոնիմով-Վորոպով և  
շատ ուրիշ բարձրաստիճան անձինք: Ձեկուցում  
արեցին պ. Գինգելը և տեղի գեղարտեստեական  
պ. Գամբարով (Արտաքին լուրեր և անասնապահու-  
թեան մասին): և պ. Շալիով (Շերամապահու-  
թեան մասին): Բոլոր զեկուցումները գլխաւոր  
միտքն այն է, որ Անդրկովկասը շատ թանկ է  
նստում պետութեանը, իսկապէս ոչ ինքն իրան  
ներկայէս պահել կարող է, ոչ էլ պետութեանը  
մի որ և է արդեւոր տալ կարող է, այլ ընդհակա-  
ռակն պետութեանը միշտ զեփոցիտ է կրում մեր  
երկրի վրա: Այդ պատճառով զեկուցումները  
կարծես թէ միմանց խօսք էին տուել և բոլորն  
էլ առաջարկում էին որ կառավարութիւնը աւելի էլ

մեծ գումարներ ծախսի երկրի վրա, որպէս զի  
վերջը շահ ունենայ երկրից: Թէ պ. Գինգելը տե-  
սի է պ. Գամբարովի զեկուցումները չնչում էին  
այն մօղային անտեսական վարդապետութեամբ,  
որ իշխան Բիսմարկի, պրոֆէսոր Վադսէրի և այ-  
լոց չնորհով վերջին ժամանակները ամեն տեղ  
տարածվել է. ամեն բան սպասում, խնդրում,  
պահանջում են այժմ կենտրոնական կառավարու-  
թիւնից: Մագիստրոս Գամբարով այնտեղ է հաս-  
նում որ առաջարկում է թուրք թախտակաւան, խաշ-  
նարած աղաքանակութեան դէմ գործ դնել այս  
կամ այն միջոցներ նրա իրաւունքը արօտա-  
տեղերի վայելման վրա սահմանափակելու համար,  
որպէս զի մեր թուրքերը ստիպված լինեն պա-  
րագել երկրագործութեամբ և ոչ թէ խաշնարա-  
ծութեամբ: Երբեք չենք իմացել որ մեծ քաղաքա-  
անտեսական փոփոխութիւններ կարելի լինէր ա-  
ռաջ բերել մի երկրի մէջ, որինակ մի ամբողջ  
աղաքանակութիւն խաշնարածներէր դարձնել եր-  
կրագործ, մի ամբողջ երկիր անասնապահութեան  
չըջանից անցկացնել դէպի երկրագործութեան չը-  
ջանը, —բուն վարչական միջոցներով, ինչպէս  
առաջարկում է զիտնական մագիստրոսը:

Շնորհակալութեամբ ստացանք «Չայնադերալ»  
աղաքային երգարան հայ զարդոցների համար» ժո-  
ղովից և ձայնագրեց Նիքիլ քահանայ Երզնկեանց:  
Գիրքը տրված է վարդապետատու 1882 թվին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„РУССКИЙ КУРЬЕР“ ԼՐԱԳԻՐ Կ. ՊՈԼՍԻ  
Թ.ՊԱՎՅՈՒԹԻՒՆ

Ձը նայելով անգլիական դեսպանութեան

բլուրներ, որոնց վրայից դարձանամիջին հոսող  
բազմաթիւ հեղեղներն ամենայն չափով և զիւրով  
քարեր էին խոնել գետակի, ձորակի մէջ: Նեղ և  
ուրուռն ճանապարհը պատած էր մացառներով և  
ընտանի կաղնույ, հոնի և ընկուղի ծառերով: Օս-  
ղիսի նման աստ անդ ցրված մի քանի պարտի-  
զակներն և արտերն միակ արկունակներ վայելին  
էին այս ամալի ձորերում: Գիշերային թաղուհին  
արծաթափայլ լուսինը՝ կապոյտ և ջինջ երկնա-  
կամարից արդէն իր սպիտակ ճառագայթներով  
թափանցում էր խորին ձորերի մէջ, մեղ մօտ,  
երբ մինք թողնելով մեր ետին այդ խուլ վայրերն,  
հասել էինք Տանձոտի մերձակայ գաւիթների ստո-  
րտը: Գիշերվան զովին, աստղազարդ երկնից ներ-  
քե, երբ բոլոր ծառերն, բլուրներն, ձորերն և  
դաշտերն լուսաւորված են լինում լուսնի լոյսով,  
լաւ ընկերի հետ հեծնալ ճանապարհորդել մի  
այնպիսի բերկրանք ու հրճուանք է ազդում մար-  
դուն, որ աւելի կարելի է զգալ քան թէ բացա-  
տրել... Վերջինս զգաւիթների ստորտին՝ նոյն  
տեղին բնող ականակիտ սառն աղբիւրի ջրով  
մեր ծառերը յազդեցնելուց յետոյ, սկսանք դառն-  
վերի կրճատներն չափել: Այդ գաւիթների գլխին  
կանգնած է մի կիսաթուղ փոքրիկ աշտարակ որ  
տիրում է ամբողջ այդ ձորային ճանապարհին:  
Այդ աշտարակի շինութեան հանգամանքն լաւ  
յայտնի է ինձ, բայց շինութեան ձեւից և զիւրից  
զիւրին է հասկանալ, որ դա մի և նոյն ժամանակ  
է կանգնած Արեւմտեան երկրապարտի և Արդու-  
նի մէջ ձորին գետի վրայի ժայռի աշտարակի  
հետ: Զառիթներ երկուց յետոյ, մի քառորդ  
ժամ եւ ձիավարեցինք և ահա մեր առջև ներկայ-  
ացաւ Տանձոտ գիւղը իր քարաշէն եկեղեցիներ-  
տովն ու «Վամիսերով» (մզկիթներով) և փայտաշէն  
տանիկներով, որոնք չըջապատած էին մեծ մա-  
սամբ սիմիտրի և ծխախոտի արտերով: Լուսնի  
լոյսը տիրապետում էր բոլորնայն այդ ընդարձակ  
դաշտաւայրին: Բնութեան արարածներն՝ ամեն ոգ,

կարծիքների արձագանք համարվող լրագիր-  
ների հանգստացող յօդուածներին, լորդ  
Գիւֆէրինի և Պոլիս ժամանելը շատ ակա-  
թիւն է թիւրքերի համար: Թիւրքերն  
գտնվում է իր պատմութեան ամենակիրա-  
կական վայրկեաններից մէկում: Ընտելանա-  
լով ապրել մեծ պետութիւնների մրցման  
հաշուով, նա այժմ ցաւով տեսնում է, որ  
այդ քաղաքականութեան ժամանակը անցաւ  
և որ մեծ պետութիւնների մէջ եղած ան-  
համաձայնութիւնը ոչ միայն զօրութիւն է  
տալիս նրան, այլ ընդհակառակը, խոշոր  
պատճառ է դառնում նրա թուլանալուն:  
Թիւրքերի կրիտիկական դրութիւնը լաւ  
հասկանալու և պատրաստվող անցքերի թե-  
ւը բունելու համար, մենք անհրաժեշտ ենք  
համարում յիշել վերջին ամիսներում պա-  
տահած իրողութիւնները:

Յայտնի է, որ ռուսաց Կոյսրի թաղա-  
դրութիւնից յետոյ, Սերվէր-փաշա և Պոլիս  
վերագառնալով խորհուրդ էր տալիս սուլ-  
թանին մօտենալ Ռուսաստանին: Սերվէր-  
փաշայի խորհուրդները ազդեցին սուլթանի  
վրա, և Բ. Գրան ու մեր քաղաքի ռուսաց  
դեսպանութեան մէջ բանակցութիւններ  
սկսվեցան: Բայց սուլթանի այդպիսի տրա-  
մադրութիւնը շատ երկարատեւ չէր, Բեր-  
լինի թիւրքաց դեսպան Սաիդ-փաշա ա-  
մեն միջոցներ գործ էր դնում համոզելու  
իր թագաւորին, որ եթէ ընդհարումն պա-  
տահի Եւրոպայում, Թիւրքերի փրկութիւ-  
նը կտրված կը լինի նրա համաձայնութիւ-

նից Գերմանիայի հետ: Գերմանիան էլ, որ-  
պէս երեւում է, համաձայնվում էր հովա-  
նաւորել Թիւրքերի մի քանի պայմաննե-  
րով: Սուլթանը այս անգամն ևս ենթարկ-  
վեցաւ իր դեսպանի ազդեցութեանը, և  
Մուխտար-փաշա ուղարկվեցաւ Գերմանիա,  
գերմանական զօրաւազին ներկայ գտնվելու  
համար, բայց իսկապէս սուլթանը հրա-  
հանգներ էր տուել Մուխտարին բանակցու-  
թիւններ սկսել Գերմանիայի հետ իր անու-  
նով: Մուխտար-փաշային Բերլինում ցոյց  
տուած մեծարանքները և հիւրասեր ընդու-  
նելութիւնը շատ լաւ տպաւորութիւն գոր-  
ծեցին Կ. Պոլսում և ժամանակաւորա-  
պէս ցրվեցին սուլթանի տրամութիւ-  
նը: Բայց այդ ուրախութիւնը թուլա-  
ցաւ, երբ տեղեկութիւն ստացվեցաւ Կո-  
պէնհագէնի տեսակցութեան մասին: Թիւր-  
քերը անդադար յուսադրվում էին, որ  
անգլո-ռուսական համաձայնութիւնը աներե-  
ւակայելի բան է և ահա թէ ինչի համար  
անգլո-ռուսական համաձայնութիւնը սաս-  
տիկ անհանգստութիւն պատճառեց նրանց:  
Մինչև վերջին ժամանակները թիւրքերը  
երեւակայում էին, որ Սերվիլի արած առա-  
ջարկութիւնները Թիւրքերի կրեք չեն  
իրագործվի և այդ պատճառով նրանք ա-  
զատ են ընդունել նրանց կամ չընդունել:  
Բայց անդիական թիւրքաթիւնների որոտը Ա-  
լեքսանդրիայի տակ ցրվեց այդ ենթադրու-  
թիւնները: Ինչ որ վերաբերում է Ռուսաս-  
տանին, այդ վերջինը իր հրամանի տակ

թէպէտ արջերի համար շատ լաւ, մահացու է,  
բայց միւս կողմից վտանգաւոր է այն պատճա-  
ռաւ որ երբեմն անգլո-ռուսական պայման-  
ագրումն Այսու ամենայնիւ չընայելով իր դէմ գործա-  
դրված այդ բոլոր միջոցներին՝ արջը դարձեալ կա-  
րողանում է դանել մի անպաշտպան արտ, ուր ա-  
զատ մտնում է և իր գործն կատարում:

Գեղ. շատ ժամանակ կար կէս գիշերին երբ  
մենք արդէն հանգստացել էինք Տանձոտի հայոց  
մի համեստ յարկի ներքե:

Իստեղով Տանձոտի վրա, Հ. Գուր. Ինձիճնան  
իր Նոր-Հայաստանի Աշխարհադրութեան մէջ, ա-  
սում է «Յառաջագոյն էր քաղաք, այլ այժմ է  
գիւղի դաշտաւայրի»: Բայց մեղ ոչինչ հաւաստի  
յայտնի չէ նրա հուշերի մասին, եթէ դա մի և  
նոյն «Տանձոտ» չէ, որը յիշում է Կիրակոս Պատ-  
միչ Գուգարաց աշխարհի մէջ:

Տանձոտ գիւղը ունի այժմ 180 տուն բնակիչ,  
որոնց 65-ը հայ են, իսկ 115-ը մասնաբաժան: Այդ  
մասնաբաժանների էլ մեծագոյն մասը դարձած են  
հայերից: Գորա թէպէտ ոչինչ հասկացողութիւն  
կամ ծանօթութիւն չունեն այդ դաւանաւորութե-  
ան մասին, բայց իրենց դէպքի գծերը, տե-  
ղի դրութիւնը, բնտանական և գործունեայ կենաց  
մէջ սովորական գործածած հայոց բառեր, ինչպէս  
և ցարդ պահանջած տեղական հայկական սովո-  
րութիւններն բացարձակապէս վկայում են այդ:  
Գիւղի տանուէրը, որ գէշ յարաբերութեան մէջ  
չէ, ընդհանրապէս, հայոց հետ, և պարզ ու հաս-  
կանալի կերպով խօսում է հայերէն լեզուն, նոյն-  
պէս մի մասնատական հայ է: 65 տուն հայերից  
5 տունն էլ կաթօղի են Տանձոտում: Սղբա ոչ-  
ինչ նեղութիւն չեն կրում իրենց համարին լու-  
սաւորչական եղբայրներից: Ներքին լինի մեղ գի-  
տողութիւն անել պատեղ որ, ինչպէս առ հա-  
տարակ, թէ պատմութիւնից և թէ ներկայ ժամա-  
նակի պատահարներից յայտնի է, հայերը երբ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԱՆՁՈՏ ԳԻՒԼ

Արդուն դաւառի մէջ ամենից բազմամարդ,  
ջրաշատ և միանգամայն գուարճալի գիւղն Տան-  
ձոտն է: Այս օրերս առիթ ունենալով ես մի  
քանի օր ժամանակ անցկացնել այդտեղ, իմ ճանա-  
պարտական նկարագրութիւնն աւելորդ չեմ հա-  
մարում ի լոյս հանել «Մշակի» մէջ: Վասն զի որ-  
չափ և աննշան լինեն կամ երբեք այստեղի գիւղ-  
քը սովորութիւնը և առանձնապատկերները, այ-  
սուամենայնիւ ներկայ և սպառնալ բանասերների  
ուշադրութիւնից էլ վրիպելու չափ չեն: Եւ շատ  
նշանաւոր ու բնական է յարգելի պ. պրոֆէսոր Ա.  
Արծրեանու մեր վրա դրած պարտականութիւնը  
«հնչաւոցն մեր յաջորդների գործը և չը թաղել մո-  
ռացութեան մէջ այն, ինչոր մեղ յայտնի է ներ-  
կայից, այլ մեր կարողութեան չափ աւանդել ա-  
պագային մի լիակատար և բազմակողմանի պատ-  
կեր մեր այժմեան կեանքի» (տես. «Մշակ» № 129,  
դասախոսութիւն պրոֆ. Ա. Արծր:)

Տանձոտ գիւղն Արդուն քաղաքից մօտ 55  
վերստ և Արդանուզ գիւղաքաղաքից 15 վերստա-  
չափ հեռաւորութիւն ունի: Արդանուզից մինչև  
Տանձոտ ճանապարհն անցնում է իշխանար և Ա-  
րալի գիւղերի միջով: Տանձոտ երթալու համար  
արեւելից տարութիւնից նեղված լինելով ես ժա-  
մանակ ընտրեցի այն միջոցն, երբ արդէն արեւն  
մօտ էր խոհարարի դէպի մայրը: Մենք երկու  
հոգի էինք: Արալաքայի անցնելով վերջինս առ իշ-  
խանար և Արալի գիւղերը՝ ես ու ընկերս մտանք  
ձորային ճանապարհի մէջ, որի բովից հոսում էր  
խորհրդալով «Արալի» գետակը: Ջրի և ճանապար-  
հի երկու կողմերը բարձրանում են չարք չարք

միշտ բաւական միջոցներ ունի իր պահանջները պաշտպանելու համար։ Այդպիսով, այդ երկու պետութիւններէ համաձայնութիւնը կը ստիպէր թիւրքիային ստորագրել նրանց բոլոր պահանջները կամ, այլապէս ասած, երթարկել մեծ վտանգի։ Բայց սուլթանը, որ շատ հեռու էր գնացել Գերմանիայի հետ ունեցած բանակցութիւններէ մէջ, չէր կարող յետ նահանջել։ Սակայն, եթէ նա կը հեռանայ եռակի դաշնակցութեան բանակից, նրան կը ներկայանան ուրիշ տեսակ դժուարութիւններ։

Այդպիսով եւրոպայի բաժան բաժան ինքեւր բոլորովին հակառակ է թիւրքիայի շահերին։ Տարակուսանքը խիստ մեծ էր, երբ Լոնդոնի և Ս. Պետերբուրգի օսմանեան դեսպանութիւններէ ստացված տեղեկութիւնները հասկացնել էին տալիս, որ Կոնստանդնուպոլսէն շատ քիչ հաւանականութիւն ունի։ Թիւրքաց պաշտօնական շրջանները ժամանակ չունէին հաւատարմ տեղեկութիւններ հաւաքելու, և ահա անհանգստացող լուրեր մէկը միւսի ետեւից սկսեցին հասնել Կ. Պոլսի։ Այդ բոլոր վատ նշան էր թիւրքերի համար և նրանք անհանգստութեամբ սպասում էին լորդ Գիւֆերինի գալուստին, որպէս զի նրա ձեռքը և վարմունքից կարողանան դատել իրանց դժուարութիւններէ չափերի մասին։ Սուլթանը հրամայեց հանդիսաւոր կերպով ընդունել անգլիական դեսպանին նրա Կ. Պոլսի մուտ գործելու ժամանակ։ Սուլթանի քարտուղարները և թիւրքապահները ընդհանուր գնացին Անգլիայի ներկայացուցչին, բայց հէնց որ նրանք հեռացան Ստամբուլի նաւահանգստից, իսկոյն նրանց ետեւից հրաման ուղարկվեցաւ վերադառնալ Կոնստանդնուպոլսի։ Սուլթանը անհամբեր և մտածեց, որ այդպիսի հանդիպում լորդ Գիւֆերինին կասկածելի կը դարձնէ իրան, սուլթանին,

եռակի դաշնակցութեան աչքում։ Այդ պատճառով լորդ Գիւֆերին միայնակ մուտ գործեց օսմանեան մայրաքաղաքը։ Իր վերադարձից յետոյ միւս օրը անգլիական դեսպանը գնաց Բ. Գուռը մեծ վիզիրի և արտաքին գործերի մինիստրի մօտ։ Մինիստրները արդէն պատրաստ էին նրան ընդունելու համար։ Լորդ Գիւֆերին յայտնեց նրանց, առանց որ և է աւելորդաբանութեան, որ թիւրքիան անցապաղ պէտք է կատարէ Բերլինի դաշնագրի դեռ ևս չիրագործված յօդուածները, որ այդպէս է անգլիական կառավարութեան անփութիւն ցանկութիւնը։ Մեծ վիզիրը, որ սպասում էր իրա նման առաջարկութեան, արդէն պատրաստ էր պատրաստել. այդ առաջին անգամն է պատահում, որ թիւրքաց մինիստրը ուղղակի պատասխան տուեց եւրոպական դիպլոմատին։ Նա յայտարարեց, թէ մինչև որ Բերլինի դաշնագրի թիւրքիային նպատաւոր յօդուածները չեն իրագործվել, թիւրքիան ևս իր կողմից անցողիկ կը մնայ, որովհետեւ կատարելով այն, ինչ որ դրված է իր պարտականութեան վրա, ինքն (թիւրքիան) կը զրկվի միակ միջոցից ստիպել իրագործելու յօդուած իրան գրված յօդուածները։ Թիւրքերը և անգլիացիք միջում էին անկեղծութեան մէջ։ Իր կողմից լորդ Գիւֆերին շատ պարզօրէն յայտնեց, որ թիւրքիան ամենին յոյս չը պէտք է ունենայ, որ Բաղդադի նրան հարկ կը վճարի և կը մասնակցի թիւրքաց պարտքին։ Թիւրքաց մինիստրները այդ ազդարարութիւնը շատ անարդար համարեցին և պատասխանեցին, թէ իրանք պէտք է լրջօրէն մտածեն և ապա հարցնեն սուլթանի կարծիքը։ Լորդ Գիւֆերին խնդրեց որքան կարելի է շուտ ունկնդրութիւն սուլթանի մօտ։ Այդ խնդրիցը նոյնպէս քանդում էր թիւրքաց մինիստրների հաշիւները. նրանք մտածում էին որքան կարելի է երկար ման ածել (խաբլբեղ) լորդ Գիւֆերինին, շուտով կը

համէր Գուրբան-Բեյրամի տօնը, իսկ տօնի ժամանակ ունկնդրութիւնը անհնարին է և նրանք այդպիսով երկու ամբողջ շաբաթ կը վատակեն։ Բայց արտապէս դեսպանը անուշադրմ էր և պնդում էր ունկնդրութիւն ընդունվեց սուլթանի մօտ, ուր ներկայ էին անգլիական դեսպանութեան և սուլթանի թարգմանները։ Ունկնդրութիւնը մէկ ժամից աւելի տևեց։ Այդ տեսակցութեան մանրամասնութիւնները մասին գնահատան լուրեր են տարածված, բայց նրանք, իմ կարծիքով, հաւատ չեն աւելորդ արժանի չեն. այդպիսի տեսակցութեան մարմանութիւնները չեն կարող շուտ յայտնի լինել։ Յոյս ունեւմ միւս փոստայով հաղորդել ձեզ մի քանի ճիշտ մանրամասնութիւններ։ Ներկայ ըրպէս յայտնի է միայն, որ լորդ Գիւֆերին կրկին անգամ և ընդարձակօրէն բացատրեց այն փոստիկները, որոնց կենթարկվի թիւրքիան եւրոպական ընդհարումի ժամանակ, Բերլինի դաշնագրի յօդուածները չիրագործելու պատճառով, որոնք մինչև այժմ մեռած առաւ նա մնում։ Լորդ Գիւֆերինի առաջադրութիւնները, որպէս հաւատացնում են, շատ պարզ էին, շատ լաւ ձևակերպված էին և իր քաղաքավարի ձևի տակ կարող են հրամաններ համարվել։ Ներկայումս օսմանեան մինիստրութիւնը սուլթանի հետ միասին աշխատում է մի ելք գտնել այդ ահագին դժուարութիւնից։ Որպէս առաջին միջոց, Բ. Գուռը տեղեկացրեց հայոց պատրիարքին, որ նա տեղից չը շարժվի և չը մտնենայ մեծ-բերդաւորական դեսպանութեան պալատին։ Պատրիարքը, շատ լաւ գիտենալով, որ անհնարաբար չափանութիւնը շատ թանկ կը նստի թիւրքաց Հայաստանի հայերին և հաւատ ընծայելով անգլիացիների միջնորդութեանը, հանգիստ է մնում. նա իրան հիւանդ հրատարակեց։ Նա հիւանդ է որպէս անգլիական դեսպանութեան համար, նոյնպէս և պալատի համար, սուլթանը երկու

անգամ կանչեց նրան իր մօտ, բայց պատրիարքը, պատճառ բերելով իր հիւանդութիւնը, չէ գնում պալատը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիեննայի «Neue Freie Presse» լրագիրը հետեւել կերպով նկարագրում է Գերմանիայի և Աւստրո-Ունգարիայի յարաբերութիւնները թիւրքիայի հետ։ «Աւստրո-Ունգարիայի ամենահեղափոխականութեամբ լի լինումը Բիսմարկի շատ լայն է տարածում իր քաղաքական գործունէութեան ուսկանը։ Նա ապացուցեց այդ, չը մոռանալով Ապա-նիային և այժմ էլ չէ մոռանում թիւրքիային։ Մի և նոյն ժամանակ նա հետզհետէ առանձնացնում է վերջինից Գերմանիան մասին երազող Ֆրանսիային։ Վաղուց նա նկատել է, որ սուլթանը ցանկանում է մէկի հետ դաշնակցութիւն կապել, ձեռք բերել մէկի բարեկամական օգնութիւնը։ Տարածված լուրերին նայելով, սուլթանը երբեմն առաջարկում էր, որ թիւրքիան միասնայ աւստրո գերմանական դաշնակցութեանը, փորձում էր բարեկամանալ ֆրանսիական հանրապետութեան հետ և վերջապէս աշխատում էր մօտենալ Ռուսաստանին։ Սուլթանի այդպիսի ձգտումները անկասկած չէին կարող աննկատելի մնալ եւրոպական խաղաղասէր քաղաքականութեան առաջնորդի համար։ Թիւրքիան իշխան Բիսմարկի համար նշանաւոր գործ դարձաւ։ Բիսմարկ հետաքրքրված է թիւրքիայի վերածաղկման հարցով։ Գաղի-Մոլտաւր-փաշան դարձվում է Ֆրիդրիխսթէյնի մէջ և խորհրդակցում է իշխան Բիսմարկի հետ։ Թիւրքիայի պահպանելը եւրոպական խաղաղութեան շահերի տեսակէտից շատ նշանաւոր է Գերմանիայի համար։ Թիւրք-բերդաւորական բարեկամութիւնը անմիջական օգուտներ տուեց Աւստրո-Ունգարիային։ Նրա թիւրքիան Գերմանիայի միջնորդութեան չնորհիւ կօչնէ Աւստրիային ընդդիմաբեղ զլափօնական ձգտումներին, դա կը նպաստէ «status quo» պահպանելուն և միակերպ օգուտէս կը լինի թէ Աւստրիայի և թէ թիւրքիայի համար։ Գիտ. և Կ. Պոլսի մէջ աչքի առաջ ունեն դաշնակցութիւն Անգլիայի հետ, բայց այժմեան հանգամանքները նրան անկարելի են դարձնում։ Սուլթանը կարող է մոռանալ Լայպզի հպարտ վարմունքը, Գոթենի տուած յանձնարարութիւնը, ծովային ցոյցը Գուլբիխի մօտ, Անգլիայի վարմունքը յու-

կրօնական տեսակէտով իրարից բաժանված են, միմեանց հետ շատ բարեկամական յարաբերութեան մէջ չեն ապրում. ուժեղ և բազմաթիւ կողմեր միմիւր աշխատում է ձեռքը ընկնել փոքրամիտ, մի խօսքով լաւ դրացի չեն լինի իրար հետ։ Բայց Տանձոտում դրա հակառակն է երևում, որ 60 տուն լուսաւորչական հայ կայ և 5 տուն կայ կաթոլիկ, բայց վերջինների հետ շատ ներդաշնակ և հաշտ աչքը են վերաբերվում առաջինները և յարաբերութիւններն երկու հասարակութեանց մէջ շատ լաւ են գնում։ Դրա իսկական պատճառը բնակիչները հիմնում են այն բանի վրա որ թէև Տանձոտում լուսաւորչականք ամեն կերպով յառաջացած են և զօրեղ քան կաթոլիկները, սակայն որովհետեւ Արքանուշում, ուր մնում է կառավարութիւնը, բոլոր հայ-կաթոլիկներն են և Տանձոտի լուսաւորչականք շարունակ ստիպված են իրենց այլ և այլ գործոց համար դիմել հոն, ուստի շատ դիւրին է մտածել որ Արքանուշի հայ-կաթոլիկներն աշխատելն իրենց կրօնակիցները վերջը հանել. մեր այս ասածին տեղացիք բնութւն են բազմաթիւ օրինակներ... Գծադրել և յիշատի, դեռ մեր ազգը որ մենք երկու համարիւն հասարակութեանց լաւ յարաբերութիւնները մենկեւր համար ստիպված ենք այդպիսի պատճառների վրա հիմնվել...

Թէ լուսաւորչական և թէ կաթոլիկ հայերն ունեն իրանց սեպական եկեղեցին և քահանայն։ Կաթոլիկ հայոց եկեղեցին հիմնված է Կ. պոլսեցի հայ-կաթոլիկ Գեօզեան Գալօր Էֆէնդու հօր ծախքով։ Գալօր Էֆէնդու 1870—76 թուականներում նշանաւոր է հանդիսացած իբրեւ ամենազօրեղ պաշտպաններից մին հակահատուկ կուսակցութեան։ Այդ եկեղեցին կառուցանելուց յետոյ ի նպատակ նրա քահանայի Կ. Պոլսից շարունակ փոխ էլ է գալիս եղել, մինչև որ հասուհանաց-հակահասուհանաց խաղաղութեան միջոցին, ինչպէս Արքանուշի ամբողջ եպիսկոպոսական թե-

մը, Տանձոտի եկեղեցին էլ հասուհանաց պատկանելուն համար, Գեօզեան Էֆէնդու բոլորովին դադարեցուցել է իր բարոյական և նիւթական օգնութիւնը։ Լուսաւորչական հայերն իրենց եկեղեցւոյն կից՝ ծխական ուսումնարան ունեն, որ հիմնված է 1845 թվին, ուր հաւաքվում են 50-ի շուրջ աշակերտներ։ Գաղափարական շինութիւնը շատ քարամար է։ Գաղափար ունի մի ուսուցիչ, պ. Յովն. Եսայիան որ աւանդում է հայոց լեզու և աւարկաներ։ Ուսուցչի ուժովը հաւաքվում է աշակերտներից և մասամբ էլ հոգացվում է գաղափարական տոկոսներից։ Մինչև այս տարի այդ գաղափար շատ անկարգ դրութեան մէջ է եղել։ Բայց այս տարի Եսայի Եսայի (Արքանուշի գաւառում) (УЧАСТКОВЫЙ НАЧАЛЬНИК) պ. Կ. Կամարական, որ վարում է Արքանուշի գաւառում թեմական տեսչի (Պ. Պոռնեանցի) գործակցի պաշտօն, այցելելով այդ դիւան ընտրել տուեց յատուկ հոգաբարձուներ, մաքրեց եկեղեցւոյ և դպրոցի խառնակ հայիւներն, դպրոցի հին դասարաններն իր սեպական ծախքով ըստ կարելոյն փոխեց, նորերն բերել տուեց, տեղական հանգամանաց և ընդհանուր մանկավարժական պահանջին քիչէ շատ քարամար կանոններ դրեց և հիմա դպրոցը մի բլէ բարոքեղ և կարգաւորեղ դրութիւն ունի։

Գործովորի տնտեսական դրութիւնը լաւ վիճակի մէջ է։ Գործովորի զիւարար պարագայները երկրագործութիւնն է, որ կատարվում է հին կարգերով և գործիքներով և մեծ արդիւնք չէ տալիս։ Լաւ նաեւ մի քանի մանր վաճառականներ կատարել են միտաբաններին, նոյնպէս մի քանի արհեստավորներ, ինչպէս երկաթագործ, դերձակ և այլն, որոնք միմիայն հայերից են։ Տեղական հայ կանայք գործում են նաեւ բրդեղ գործուածներ, որոնք տարածվում են շրջակայ թուրք գիւղերի մէջ թէ Արքանուշի և թէ Օլթիի վաճառում։ Դա անգամ Արքանուշի վաճառականները Տանձոտ

գործ են պատուիրում և այդ գործուածները իրենց աճառութեամբն ու դիմացիութեամբն բաւական յարգի են։ Բայց Տանձոտի և Արքանուշի այդ տեղական ձեռագործների մասին մի այլ անգամ ընդարձակ կը խօսենք։ Վերս յիշեցնել որ ժողովուրդը հայ և թուրք, պարագլուխ է երկրագործութեամբ։ Ազգաբնակչութեան աճման պատճառաւ հողի պակասութիւնը մեծապէս զգալի է դարձել մանաւանդ հայերի համար։ Բերլինի դաշնակցութեան համաձայն այս գիւղի թիւրք բնակիչներից էլ զաղթել են թիւրքիա, որոնց կալուածների մի մասն էլ հայերն են գնել, մեծ մասը պարտքով, որպէս զի այդու իրենց վարելահողի պակասութեան դարման տանին։ Բայց այժմ տեղական կառավարութիւնը—բարձրագոյն իշխանութեան կարգադրութեամբ յայտնի բան է, զաղթականաց բոլոր կալուածներն դրաւ է յարձուհիւ։ Նոյն իսկ չէնքերն և պարտեղներն խլելված են գնդերի ձեռից։ Հիմա այդ մուհա-ջիրի (զաղթական) կալուածներն, տուն, պարտեղ, այգի, արտ, մարդ, ամենը կապալով վարձու են արված աճուրդի մէջ, գիւղացւոց։ Այնպէս որ իրենց վերջին կողակը զոհող խեղճ գիւղացիք ստիպված են դարձեալ պարտք պարտել իրա աւելացնելով փոխ ստակ գտնել, որպէս զի աճուրդի մէջ, իրանց գնած կալուածը ձեռք անցունեն, ի՞նչ են ուղեր իրենց գնած կալուածից էլ վաճառած փողից էլ բոլորովին զրկվել։ Այդպիսի դրութիւնը վերջին աստիճանի նեղութեան մէջ է ձգել ժողովրդեան։ Մի և նոյն յուսահատական վիճակի մէջ են բովանդակ Արքանուշի և Արքանուշի գաւառի ժողովուրդը։ Այդ խնդրի մասին մենք արդէն խօսել ենք «Մշակի» մէջ (1882, № 173 և 174) և ցուցել ենք թէ որպիսի աղէտալի հարուած է պատճառած և կը պատճառէ դա ժողովրդեան տնտեսական վիճակին։

Անաստասիանութիւնը նոյնպէս թէպէտ տարածված է Տանձոտում, բայց հոգացողութիւնը լաւ

չէ և հետեւաբար անասուններն էլ լաւ տեսակից չեն։ Ընդհանրապէս մեր գիւղացիք շատ անող են իրանց կենդանեաց ցնդն աղտոյնացնելու։ Ինչ տանի կենդանիներից Տանձոտ գտանվում է զլէ խաւորաբար ձի, կով, եղ, էշ, ոչխար ու այլ։ Արքանուշում պահում են նաեւ խոզեր, որ ուստական տիրապետութիւնից յետոյ է սկսված. և բնական էր որ այդպէս լինէր, քանի որ մասնատակաւորութեան խորշումն յայտնի է աւիճակ խըղճից (խոզից)։

Գ. Տանձոտի բնակչաց մոտաւոր դարձադրման աստիճանի մասին շատ փոքր քաղաքավար է տարածված Արքանուշի և Արքանուշի մէջ, ընդհանրապէս։ Տանձոտից սոցա բերում յիշվում են իւրեւելի փոռից։ Սակայն տանձոտից որպիսի որ միամիտ լինելն, երբեք այն ատիճանի պարզաբան չեն որ արդարացի հանեն իրենց վերադրուած զանազան առարկութիւններն ու գործերը։ Եւ կամ եթէ նրանցից մէկը մի աղայական պարզամտութիւն գործածէ որ և իյէ արկածի մէջ, արքանուշից շարամասար վերադրում են այդ բովանդակ գիւղին։ Օրինակ՝ ճիւղ թէ ստաւ տանձոտից մտածելով եղ չորացնել, հանել փուխ է տանեաց վրա, որ արեւ չորացնել քաշէ նրա մէջ եղած թացութիւնը, որպիսի զի ինք յետոյ դարձեալ քաղէ եղը և ցնէ աստի մէջ։ Ահա այդ դէպքից առնելով խնդր տանձոտից վրա մնացել է մի տիպոս որ շատ պատիւ չի բերել իրենց մտքին—այսինքն չի փոռ։ Պատմում են դարձեալ թէ մի այլ տանձոտից իւրեւ տեղ է, փոխանակ զանազան եղի քաղ բերելու, եղին զանազան քաղ է տարել։ Պատմում են նոյնպէս մի տանձոտից թիւրքի համար և աւստի մենկ ծիծաղելն է, որ թիւրքը եղի է ծաղկում և սկսել է կացնում նրա հիւղերը կտորատել



Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՍՏԱՄՈՒՔԱՅԻՆ ՑԱՒԵՐԸ

ՊԵՊՍԻՆԵԱՆ ԳԻՆԻ ԲՈՒԴՕ

Այդ գինին շատ դուրեկան համ ունի, 25 տարի շարունակ զործ է ան-  
վում հեռակալ զրկածներում։ ԱՌՈՐԺԱԿԻ ԲԱՅԱԿԱՅՈՒԹ ԵՍ, ՍՏԱՄՈՒՔԱՅԻ  
ՑԱՒԵՐԻ և առհասարակ ԱՆԿԱՍ ՄԱՐՍՈՂՈ ԻԹԵՍ Ժամանակ։

Պէպսին Բուդօ՝ ձանաչված է փարիզի բժշկական Ակադեմիայից և արժա-  
նացաւ առաջին մեդալների փառքի աշխարհահայտում 1867 թ. ՎԻԵՆԱՅԻ  
1873 թ. ՖԻԼԱԴԵԼՖԻԱՅԻ 1876 թ. և ՓԱՐԻՋԻ 1878 թ.։

Paris: Hottot—Boudault, 7, Avenue Victoria.

Կլիսաւոր պահեստը ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Բարձրագոյն հաստատված կովկասեան ըն-  
կերութեան զեղատան ապրանքների վաճառման։

Դէպօ հաճ-Պարոնեանցի, Գրինկալի և այլ զեղատներում։

Դուրս եկաւ մամուլի տակից վաղարշապատում տպագրված նշանի քահանայ եր-  
գնեանցի նոր աշխատանքութիւնը՝ «Ձայն ազրեալ ազգային երգարան»։ Վա-  
ճառվում է 2. Գրիգորեանցի կովկասեան զրաւաճառանոցում։ Գինն է 80 կոպէկ։ Մի  
և նոյն տեղը վաճառվում են նոյն հեղինակի հեռակալ աշխատանքութիւնները։

1. Մանկական երգարան առանց նոտաների . . . . . 20 կոպ.
2. Մանկական ձայնագրեալ երգարան . . . . . 40 կոպ.
3. Դասագիրք հայի. Ձայնագրութեան . . . . . 30 կոպ.
4. Խմբական ձայնագրեալ երգարան . . . . . 50 կոպ.

1—10

ԳԼՈՐՈՒՄԻ ԳՐԻՉՆԵՐ

Արանցով կարելի է զրել ամենակոպիւր  
թղթի վրա։

Միակ գործակա  
ԼԻԱԿԱՆ Խ  
տեղը կան ամեն  
րի համար մեծ  
ԳՐԻՉՆԵՐ  
էման քան թէ  
նոյնպէս ԹԱՆԱԲԻ  
ներ, զմուռ, ՄԱ  
րիչներ, պենար,  
ներ, ծխախոտի  
ներ, ածելիք, ս  
ներ, ԲԱԶԱԹՈՒ  
րարու կարելու  
ՏԻՆԵՐ, անտաներ,  
բրիտանական մետաղից իրեր, ԼԱՊՏԵՐ-  
ներ, գզալներ, ԲԱԺԱԿՆԵՐ, ջրամաններ,  
երես լուսնալու ամաններ, ֆլորա, կրան-  
շվոյներ, այգու մկրաններ, շորի շէտակա-  
զիւն, երկաթէ թերթից, ձիւ համար։ Մա-  
կենառններ։ Բժշկական թուղթ վատերկրոյե-  
տի համար և այլն և այլն։



Լուծին ԱՆԳ-  
ԱՆՈՒԹ։ Նոյն  
տեսակ ձեռագրե-  
քանակութեամբ  
ամեն ձեռն 25%  
ուրիշ տեղ։ Կան  
թուղթ, տեղադր-  
ՏԻՆԵՐ, քարեդ-  
ԳՐԱԿՈՒ, քսակ-  
ամաններ, ՄԿՐԱՏ-  
րոյներ, խալիչա-  
ՄԱՀԱՍԱԿԱ, վե-  
համար իրեր, ԳՕ-  
ՄԱՏՈՒՑԱՐԱՆԵՐ,  
բրիտանական մետաղից իրեր, ԼԱՊՏԵՐ-  
ներ, գզալներ, ԲԱԺԱԿՆԵՐ, ջրամաններ,  
երես լուսնալու ամաններ, ֆլորա, կրան-  
շվոյներ, այգու մկրաններ, շորի շէտակա-  
զիւն, երկաթէ թերթից, ձիւ համար։ Մա-  
կենառններ։ Բժշկական թուղթ վատերկրոյե-  
տի համար և այլն և այլն։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ։  
61—100

ՍՏԱՄՈՒՔԱՅԻՆ Է մեծ քանակութեամբ փոստային  
թուղթ ընդհանուր և այլ տեսակների, ծրարներով։  
Նոյնպէս և պողպատէ գրիչներ, կէծակ, ՄԱ-  
ՏՈՒՑԱՐԱՆԵՐ տպիտակ մետաղից, տուրախի  
ՍԱՊՈՆ, թէյ 1-ին հունձի և այլն։ Բոլորն էլ  
ձախվում են 25% էման, քան թէ ուրիշ տեղ։  
Անգլիական խանութի մէջ։ Նոյնտեղ տղամարդկե-  
րանց մի քանի հագուստներ, դրապ, արիւն և  
այլն մեծ զինուումով։

5—10

Ներսիսեան հայոց ազգային հոգեւոր  
գլխաւոր հոգաբարձական խորհրդարա-  
նում, հոկտեմբեր ամսոյ 26-ին, երեկոյեան  
7 ժամին, լինելու է երկրորդ անգամ  
աճուրդ (առանց կրկնաձրգի) կապալով տա-  
լու հին գլխաւոր ներքնայարկի 32 կըր-  
պակները։ Պայմանաթուղթը կարելի է կար-  
գալ հոգաբարձութեան գլխաւորտան մէջ  
ամեն օր, բացի կիրակիէից և տօներէից, ա-  
ռաւոտեան 10-ց—12 ժամն։

3—3

ЖЕСТЯНКА 20 ЧАШЕК 1 РУБ.



ПРИ ТРЕБ. ПОЧТОЙ ПРИЛАГАТЬ НА ОТПРАВКУ.

(5. 10. 25) 15—24

ВЪ РЕДАКЦИИ

ГАЗЕТЫ „МШАКЪ“

ПРОДАЕТСЯ БРОШЮРА

НА РУССКОМЪ ЯЗЫКѢ

“ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ


ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.”

Цѣна 25 копѣекъ.

Сор. Григория А р у р у н и.

ԶՈՐԲԵՐԻՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ  
ՀԱՍՏՆՈՂ ԹԻՖԼԻՍԻ ԱՐ-  
ՀԵՍՏԱՆՈՅԸ, որ գտնվում է Նաւ-  
թուղթի մէջ, հրաւիրում է աշխատե-  
լու ԴԵՐՁԱԿՆԵՐԻՆ և ԴԵՐ-  
ՁԱԿՈՒՀԻՆԵՐԻՆ, որոնք ԶԵՈ-  
ԳՈՎ կարող են կարել համազգեստ-  
ներ և զինուորական շինեղներ, նոյնպէս և  
ուրի ԿԱՐԵՄԵՔԵՆԱՅԻ վրա  
աշխատել ԳԻՏԱՅՈՂ զերձակներին  
և զերձակահիւներին։

7—10



ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐ

ՀԱՆԱՊԱՐՀՈՐԳՆԵՐԻ ԳՆԱՑՔՆԵՐ ԲԱԹՈՒՄԻ ՆԻ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ

| Կայարան     | Գալիս է    | Գնում է    | Կայարան     | Գալիս է     | Գնում է    |
|-------------|------------|------------|-------------|-------------|------------|
| Բաթում . .  | —          | 8— առ.     | Բազու . . . | —           | 10—23 առ.  |
| Սամուրեզի . | 12— 2      | 12—18      | Գանձակ . .  | 12—20       | 12—48 զիշ. |
| Բիւն . . .  | 1— 9       | 1—22       | Թիֆլիս . .  | 7—49        | 8—31 առ.   |
| Սուրամ . .  | 6— 8       | 6—11 երեկ. | Գորի . . .  | 10—56       | 11—        |
| Միկայիլով . | 6—23       | 6—33       | Միկայիլով . | 12—26       | 12—46      |
| Գորի . . .  | 7—53       | 8— 2       | Սուրամ . .  | 12—58       | 1— 1       |
| Թիֆլիս . .  | 10—25      | 11—11      | Բիւն . . .  | 5—54        | 6— 9 երեկ. |
| Գանձակ . .  | 6—20       | 6—39 առ.   | Սամուրեզի . | 7—          | 7—20       |
| Բազու . . . | 8— 8 երեկ. | —          | Բաթում . .  | 11—21 երեկ. | —          |

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ Լ ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ

| Կայարան     | Գալիս է | Գնում է     | Կայարան     | Գալիս է    | Գնում է |
|-------------|---------|-------------|-------------|------------|---------|
| Սուրամ . .  | —       | 1—38 զիշեր. | Թիֆլիս . .  | —          | 3—11    |
| Միկայիլով . | 1—50    | 2— 5        | Գորի . . .  | 6—30 երեկ. | 6—41    |
| Գորի . . .  | 4— 6    | 4—30        | Միկայիլով . | 8—41       | 8—56    |
| Թիֆլիս . .  | 8—առաւ. | —           | Սուրամ . .  | 9— 8 երեկ. | —       |

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ՍԱՄՏՐԵԿԻԻ Լ ՓՈԹԻԻ ՄԷՋ

| Կայարան     | Գալիս է   | Գնում է  | Կայարան     | Գալիս է     | Գնում է    |
|-------------|-----------|----------|-------------|-------------|------------|
| Փոթի . . .  | —         | 8—45 առ. | Սամուրեզի . | —           | 7—30 երեկ. |
| Սամուրեզի . | 11—39 առ. | —        | Փոթի . . .  | 10—24 երեկ. | —          |

Վերականգնեցող ՄԱԿ-ՄԱՍ  
ՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց  
ԲՆԱԿԱՆ ԳՈՑՆԸ վերադար-  
ձնող։ Կինը 2 ր. շէշը, փոսւ-  
նով ուղարկված 2 ր. 49 կոպ.  
ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ



Մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ  
ԻՒՂ, մազերը ամրացնելու հա-  
մար, 1 ր. ամանը և վրձին զլտա-  
ցաւի գէմ, ՏՈՒՍԼԻՏԻ ՍԱ-  
ՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն  
64—100

Մ. Ն. ՏԵՐ-ՆԵԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՇԵՍ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ

ԱՐՄԵՆԱԿԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՈԼԻԶԵՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻՆԵՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՔ, զանազան աթոռներ 35 րուբլուց զիւժնը, բազիկա-  
թոռներ 6 ր., զիւժններ 12—25 ր., կաշեի, մանկական աթոռներ և այլն։  
ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀԱՍԱԿԱՆԵՐ, ձանապարհի մահալաներ, պա-  
հարաններ, ծաղիկ սամուրներ։ Չեմոզաններ 2 ր. 75 կ.—26 ր., սակի-  
յաժ ձեռքի և ուսից կանխու, ձանապարհի սուկաններ, ՀԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿԱՆ 5  
ր. 50 կ.—30 ր.։

Սամուրներ, խոհանոցի պրիձէ ամաններ, կօֆէյնիկ, թէյամաններ, ութ-  
ներ և աղաւու զործիք, զերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒՆԱԼՈՒ ՄԱՐ-  
ՄԱՐԻՈՆԻ ամաններ 40 ր., երես լուսնալու պրիձէ և ժեստի ամաններ։

ՊԱՏԻ ՀԱՅԵԼԻՆԵՐ 9 ր., տուրախի հայելներ 2 ր. 40 կ.—13 ր., զանազան  
մետաղների մոմակներ 1 ր.—15 ր., սեղանի գզալներ 4 ր. 50 կ. և թանդ,  
թէյի գզալներ ֆրաժէի, մեխիօրի, լեհական և բրիտանական արծաթից աւելի  
էման, քան թէ ուրիշ տեղ, զանալներ, պատառաքաղը 2 ր.—26 ր.։

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՈՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և  
մարդկերանց, ուսական և անգլիական պողպատէ և երկաթէ զանալներ, յայտ-  
նի գործարանները, 10,000 հատ անգլիական և զերմանական կողպէքներ  
10 կ. և աւելի։

ԲԵՂՈՎԱՆԵՐԻ զանազան տեսակի 3 ր. 50 կ.—35 ր., պատրոններ բէկովեր-  
ներ համար, հրացան 6 ր. և աւելի, զանազան վեշալաներ, կշիռքներ։ Անդ-  
րական և ամերիկական կիւնկա 50 կ.—2 ր. արշներ։

Մշտապէս ունեւ 10,000 ֆ. Թէճ Պօպով եղբայրների, կաֆէ ՄԻՍԵԼՍՈՆԻ,  
թէյի համար խմորեղէն Էյնեմի, ԲԵՑԿԱՐԿԻ սիգարներ, հոտաւէտ ջուր (Օդը-  
կոյն) ծխիկ փոշի, պուդրա, գլիցերին սապօն և այլն, աւելի էման քան թէ  
ուրիշ տեղ։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ զալանտէյի զանազան ԱՊՐԱՆՔՆԵՐ, ծխախոտի արկը,  
զրամարկը, քսակներ, սանդղներ, շապիկներ, լայիկ ձեռնոցներ կանանց, զինուո-  
րական գամէի ձեռնոցներ, զարուս, թելի, բոնդի և մարմարիօնի թանաքաման-  
ներ, միւրամաններ, գրիչներ, մատիտներ, զրչակիթեր, սուրբուշ, փոստի թուղթ,  
ծրարներ և այլն։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, զարեջրի, զի-  
նու և զեղատան ապրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ։

Վերկ յիշված բոլոր առարկաները ունեւ մեծ քանակութեամբ և ստանում եւ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործարաններից անմիջապէս։

Առեւտրականներին զիջումն և առանձին պայմաններ։

Օտարաբարաբացիք կարող են զիմել. Тифлисъ. М. Н. ТЕРЪ-НИКОГОСОВУ.

63—100